ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ե ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐ ՄԿՐՏՉ ՊԱՐՈՆԵՐ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆԸ Ե 8 Ո.

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՃԱՌՈՒԹԵԱՆ
ՎԱՂՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ,,
ԵՒ ՏԵՍԱՆԻՔ.

ԱՄՍԱԳԻՐ ԱՌԱՒՕՏԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ 10 ԳՐՈՒՇ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆԸ Ե 1
ԿԱՄԱՑԻՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ,,
ԵՒ ՏԵՍԱՆԻՔ.

ՎԱՂՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐ ՄԿՐՏՉ ՊԱՐՈՆԵՐ

ՀԱՄԱՐ 40 ԿՈՊԵԿ ՏԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ № 40

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 ՇԱԲԱԹ 1879

ԼՐԱԳՐԻՉ ասաջնորդԷ. պետ գնաշնորհ ասաստան. իմ ժողով Ա. Պատկան. ազգասէր.

— . . . . . —

պատուական հիւրասիրութեան, տանտէր նոյն ինքնին ասաջնորդ Տէր Տէր Տիգրան Տաճեցի ինչպէս ինչպէս

ՎՈՍՓ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

(ՄԱՏԵՆԱՇԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ)

ՀԱՏՈՒԱԾ

ՎԱՆԱՑԻ ՀԱՅՈՑ ԹԱՂԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՄԿՐՏՉԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՊԱՏՄԱԳԻՐ ՀԱՅՈՑ

Ի ՎԱՆ

ՏՊԱԳՐԵՑԱՒ ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՀԱԿԵԱՆ

1879

ՎԱՆԻ ՓՈՒՆԿԻՒՐԵԱՑ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԿՐՏՉԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՊԱՏՄԱԳԻՐ ՀԱՅՈՑ

Ի ՎԱՆ

ՏՊԱԳՐԵՑԱՒ ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՀԱԿԵԱՆ

1879

ՎԱՆԻ ՓՈՒՆԿԻՒՐԵԱՑ ՏՊԱՐԱՆ

« բաժակ առաջարկեց որ ծափահայն
« ցնծութեամբ ընդունուեցաւ հան-
« դիսականներէն: Հուսկ ուրեմն մեր
« պաշտօնակիցներէն մին Հայաստանի
« երջանկութեան համար բա-
« ժակ առաջարկեց և այն սրտա-
« բուղխ եռանդը, որ սքանչ Հայրե-
« նեաց անունը պղջնանց, անշուշտ
« իւր համակիր արձագանքը պիտի
« գտնէ ֆրանսական հողոյն վերայ:» —

Արգամ.

ՑԱՐԳՈՑ ԽՄԲԱԳԻՐ

Тифлис. Вѣст. լրագրի գրածը ամ-
սոյս 16-ին տեղի ունեցած հայկա-
կան ներկայացման մասին առիթ
առնուց ինձ հետևեալ երկու խօսքը
գրել, որ խնդրեմ տեղաւորէք ձեր
լրագրի էջերում:

Մայիսի 16 ամարային թատրո-
նում Հայ թատրոնասէրները ներկա-
յացրին «Սէր և Նախապաշարմունք»
պիեսան և վօդեվիլ «Աշնանային
երեկոյ»: Ինչպէս պէտք էր սպասել,
կարգալով ազիշեան, ներկայացումն
անցաւ շատ յաջողակ, որոյ ապա-
ցոյցն էր հանդիսականների մեծ թիւ-
ը, որ մինչև անգամ երաժիշտների
տեղերը վաճառված էին և անընդ-
հատ ծափահարութիւնները, որով
հանդիսականները վարձատրեցին պ.
պ. թատրոնասէրների սոցա բարե-
գործական նպատակին նուիրած աշ-
խատանքը»

Պիեսանվէի ընտրութիւնը շատ
խորհրդաւոր էր և մեր ժողովրդի
համար միանգամայն օրինակելի, քանի
որ մեր մէջ էլի կան խումբեր, որոնք
իւրեանց նախապաշարմունքը զոհում
են իւրեանց և իւրեանցների բար-
ուաւորութիւնը: «Սէր և նախապա-
շարմունք» պիեսայի պարունակութի-
ունն ընթերցողներին յայտնի լինելու
պատճառով՝ աւելորդ եմ համարում
նորա մասին խօսել:

Որքան այդ պիեսան վատ լինի
գրած, բայց այսօր նորա գազափարը
և դրդումը մեզ, Հայերիս համար,
դարձեալ նոր բաներ են, քանի որ
մենք էս գիտենք մեր կեանքի մէջ
չիշեալ նախապաշարմունքներից հե-
տևացած ծայրահեղ ընտանեկան
դժբաղդութիւնները, քանի որ այդ
նախապաշարմունքը իւր օտարոտի
ձիւղերով առաջնորդ կարող է լինել
շատ մայրերի և գեներալ Հայերին:
Պէտք է ասել, որ «Սէր և նախա-
պաշարմունքը» ուրիշ ազգերի բեմերի
վերայ նմանապէս ներկայացվում է,
և եթէ նա շատ չէ կրկնվում, գըլ-
խաւորապէս այն պատճառաւ, որ
նորա կատարումը շատ դժուար է:
Մենք չորս անգամ Տփխիսու ռուս
բեմի վերայ տեսել ենք այդ պիեսան
և միշտ ներկայացումն եղել է ան-
յաջող:

Դիմելով «Սէր և նախապաշար-
մունք»ի Հայերէն կատարման, մենք,
մեր կողմից կարող ենք մեր բաւա-
կանութիւնը յայտնել Հանդիսական-
ների հետ ի միասին պ. պ. թատ-
րոնասէրներին նոցա պատուաբեր աշ-
խատութեան և գովելի եռանդի հա-
մար: Ինչպէս ասացինք, թէ պիե-
սայի պարունակութիւնը թէ դերերի
առանձնութիւնները չափազանց դըժ-
ուարացնում են նորա կատարումը:
Բայց և այնպէս, այստեղ կատա-
րումն շատ բաւարար էր թէ ինքն
ըստ ինքեան և թէ համեմատաբար:

Լօրդ Գէսթինգը — (պ. Միրզա-
Յովհաննէսը) ներկայացաւ, ինչպէս կասէն,
իբրև մի տիպական բնաւորութիւն,
որ յատուկ է Անգղիացւոյն և հա-
րուստ Լօրդին: Շատ նշանաւոր էին
այս րոպէներն, երբ Լօրդը պատերազ-
մում է և առնչվում է երկու միմեանց
հակառակ զգացմանց մէջ, — այն է
սէրը դէպի իւր աղջիկը և նախա-
պաշարմունքի բռնութիւնը նորա
անձնաւորութեան վերայ: Բոլորովին
բնական երևեցաւ և այն կէտը, երբ
Լօրդը համոզվում է իւր կամակորու-
թեան մէջ տեսնելով դերասանի ազ-
նիւ վարմունքն և նորա կարծիքը
թէ ինչ է որդիական պարտաւորու-
թիւնը դէպի ծնողի իրաւունքը և
կամքը:

Դերասան Սիւլվան (պ. Մամիկո-
նեան) կենդրոնացրեց ուր կատարման
մէջ դրամայի ողջ կապերը և լու-
ծեց նոցա հանդիսականների առաջ
մեծ ընդունակութիւնով, արտայայ-
տելով թէ բառերի և թէ շարժ-
ուածքների մէջ հեղինակի արժանա-
ւոր մտքերը: Մերժելով Լօրդի դրա-
մական առաջարկութիւնը, պ. Մա-
միկոնեանը չէր գոռոզ և անբնական:
Գովելի էր և բնական այն տեսարա-
նում, երբ նա հարբած ձևացաւ,
որ շարժի Լօրդի գաղտ ատելութիւնը
դէպի իւր անձնաւորութիւնը: Այդ
այն րոպէներն էին, որ երկարատև
ծափահարութեան արժանացան: Լօրդ
փիսացուն (պ. Պետրոսեան — իշ. Բէհ-
բութեան) այնքան ինքնուրոյն էր,
որքան կարող է ինքնուրոյն լինել
Թէթևամիտ և իւր շահերը չհաս-
կացող Լօրդ անգղիացին: Չէ կարելի
չընդմարել այն տեսարանը, երբ այդ
Լօրդ փիսացուն, չհասկանալով իւր
հարևնացուի սէրը դէպի դերասան
Սիւլվանը, անուանում է նորան իւր
ընկեր և պատմում է իրողութիւններ
նորա ազնուութիւնների մասին, երբ
նա յայտնում է թէ դերասանը
դիտմամբ է իւրեան ձևացրել հար-
բեցող և այլն: Այդ տեսարանը կա-
տարեալ կատակ էր, որ մեզ հազիւ պա-
տահել է տեսնել Տփխիսու բեմի վերայ:

Մնում է ասել երկու խօսք չի-
շեալ հարևնացուի դերի կատարման
մասին (Լօրդի աղջիկ Լէլի — օր.
փաշայեան): օր. փաշայեանը երկրորդ
անգամն է, որ բեմ է դուրս գալիս
և նա առաջին անգամից գրաւեց
ժողովուրդի համակրութիւնը: Այս
օր նա կատարում էր չափազանց
դժուար դեր: Մեր կարծիքով կա-
տարման գլխաւոր արժանաւորու-
թիւնն այն էր, որ նա միանգամայն
բ ն ա կ ա ն էր: Պէտք է ասել, որ
մենք սովորել ենք մեր բեմի վերայ
տեսնել և լսել ծայրահեղ շարուածք-
ներ գոռալ և ճըչալ, երկիւղը, զար-
մանքը, կսկիծը, մեզ ներկայացրել են
այնպիսի չափազանց շփոթներով,
հառաչանքով, որ նոցա անբնակա-
նութիւնը միշտ մեզ հարուածել է:

Այս օր մի այլ ուղղութիւն
էր թագաւորում, ուղղութիւն, որ
ժամանակակից թատրոնական ար-
հեստը անուանում է բնականութիւն,
որն է և իսկականութիւն: օր. փա-
շայեանը կանգնած էր բեմի վերայ
իբրև բնական մարդ՝ մեծ համես-
տութեամբ և խելքով արտայայ-
տելով իւր զգացմունքները, սէրը,
զարմացքը, յուսահատութիւնը և
ընդդիմութիւնները: Ջարմանքի և
երկիւղի արձագանքներն էին այնքան
սրտառուչ և չափաւոր, որ այլապէս
նոքա շատ անբնական կլինէին: Մենք
կարծում ենք որ այսքանս պէտք է
տեսնենք օրիորդի ներկայացման մէջ,
որ երկրորդ անգամն բեմ է դուրս
գալիս — նշանակում է պէտք է տես-
նել, ընդունակութեան ապացոյցներ
նորա մէջ:

Ասածներս են բնական հետևանք
ռուս լրագրի «Тиф. Вѣст.» էջ-
ստորագրութեամբ յօդուածի անբա-
րեմտութեան ներկայ ներկայացման
մասին: Մեզ թուեցաւ թէ պ. էքսի
գրվածը ներշնչած է մի ոչ բարի
հոգու, որ իբրև թէ հայ թատրոնը
կամեցել է ոտքի կանգնել հաստատ
հիմունքի վերայ: Խնդիրն այն չէ, որ
պ. էքսին ներկայացումն չէ դուր
եկել — այդ ոչինչ բան է մեզ հա-
մար, այլ բանն այն է, որ յօդուած-
ը կամենում է ստորացնել Հայ բե-
մի նշանակութիւնը վատաբանելով
թէ թատրոնասէրներին և թէ պիես-
այի ընտրողութիւնը: Հայ թատ-
րոնի մրցման խնդիրը հին խնդիր է
օտարների համար և նա կլուծուի
ժամանակով: Բայց այստեղ պէտք է
դնել մի երկու փաստեր: Պ. էքսը
եթէ օտարական է, այլ ազգ է, —
նորա դատողութիւնը ոչինչ նշանա-
կութիւն չէ պիտի ունենայ Հայ
թատրոնի վերայ, ինչպէս իմ դա-
տողութիւնս ջինաց բեմի մասին: Ե-
թէ նա դժբաղդաբար Հայ է, ան-
շուշտ հարկաւոր է կարծել, որ նա
թերևս անկիրթ և անգրագէտ Հայ
հերձուածողներից է, որովհետև
միմիայն եպիսկոպոսի ընկերներն և
Նաղլերի աշակերտները կարող են խօ-
սել և գրել Հայ թատրոնի մասին,
ինչ որ գրվել է պ. էքսը:

Վերջացնելով մեր խօսքը մենք
ողջունում ենք յիշեալ պ. պ. թատ-
րոնասէրներին, միանգամայն ապա-
հովելով նրանց, որ Հայ հասարա-
կութեանց շահերին ծառայողները
միշտ կըտնեն իւրեանց արժանաւոր
բարձր դիրքը և կատանան նոցա ան-
կեղծ շնորհակալիքը:

Մի քանի խօսք նուէր այն կարճատես
պարոններին, որոնք «Ղալաչի Մարգա-
րի» վերջին յօդուածից (Մեղուի 33
համար.) ի զուր վիրաւորուած, իրենց
թշնամութեան թոյնը լինձ վերայ կամե-
նում են թափել:

—

Մի անգամ մի արժանաւոր հոգևորա-
կան մօտենում է լինձ և կարեկցաբար հե-
տևալ տեղեկութիւնը տալիս. «պ. Սա-
րիբէդ, զեղ բարեկամաբար խորհուրդ կը
տամ, որ այս երկու օրը ղգոյշ լինաս,
ցերեկը չատ մանչ չը գաս և դիչերները
ամենևին տանից դուրս չը գնաս. որով-
հետև մի խումբ կեղտոտ մարդիկ ար-
տաքին (չատ լաւ եմ զանազանում խար-
դախ ղրդռխներին) աղեցութիւնից ղըր-
դուած՝ կամենում են քո դէմ չարագոր-
ծութիւն անել ..... »: Ախր, ինչի՞ տէր
հայր, ինչ խաբար է, ես ինչ եմ արել:
«Դու այն ես արել, որ «Ղալաչի Մար-
գար» սատրագրութեամբ յօդուածներ ես
գրում և այս և այն կեղտոտ մարդկե-
րանց ժանդոտ գործերը մաքրում ես:
Մանաւանդ միամիտներին մոլորացրել
են թէ «Ղալաչի Մարգարը» Մեղուի 33
համարում տպած յօդուածում եօթը
վիրաց պատկերներին որպէս թէ ծաղր է
արել...»: Միւս օրը մի և նոյն տեղե-
կութիւնները և՛ուրիշներից եմ լսում և
չատերն լինձ զգուշացնում են... և այլն,
Շատ լաւ: Այս էլ մի առանձին կրթու-
թիւն է, որ մեր քաղաքում լոյս է ընկ-
նում մի քանի խարդախ չարամիտների
ջնորհիւ: Պարոններ, նախ ձեզ վիրաւո-
րել է, խայտառակել է, ձեր պատասխա-
նատուութիւնները հրապարակ է՛հանել, կեղտոտ
մարդկանց մաքրել է՛«Ղալաչի Մար-
գարը». ուրեմն զոք ձեր հաչիւը, ձեր
անմարդավայել չարագործութիւնը կա-
րող էք «Ղալաչի Մարգարի» հետ վերջաց-
նել: Լինձ հետ ամենևին գործ չունիք,
քանի որ «Ղալաչի Մարգարը» ես չեմ,
ձեզ խաթել են և մանաւանդ զուք ոչ
մի զօրաւոր փաստ չունէք և չէք կա-
րող հաստատել թէ «Ղալաչի Մարգա-
րը» իսկապէս՝ Սարիբէդ Տէր Մելքիսե-
կեանցն է: Երկրորդ՝ զուք չը կարծէք
թէ աշխարհս անտէր է, զատաւոր զա-
տաստան չը կայ և չարագործը անպա-
տիժ կը մնայ: Ո՛չ սիրելիք, այդպիսի
վայրենութիւն զուք կարող էք ազատ
գործ դնել Տաճկաստանի խորքերում, ան-
կիրթ և լեռնական քուրդերի մէջ: Այս-
տեղ Ռուսաստանի հողի վերայ այդպիսի
գործ անելը ձեր ուժից չատ բարձր է
և մանաւանդ փոքր ի չատէ քաղաքա-
վարի մարդը այդպիսի կեղտոտ չուաւ-
տանութիւններ երևակայելուց անգամ
կամաչի: Բայց եթէ զուք հաւատալով
ձեզ մոլորացնող խարդախ չարամիտնե-
րի ծուռ մեկնութիւններին, կամենում
էք զուրս գալ մարդութիւնից և վայրե-
նութիւն անել, իմ դէմ չարութիւն գործ
դնել..., այն ժամանակ կասկած չը կայ,
որ ես էլ իմ անձը պաշտպանելու հա-
մար գործ կը դնեմ այնպիսի մի խիստ
միջոց, որ ձեր արածից աւելի ու ցաւալի
լինի: Ամենահետ թող նրանք պատաս-
խանատու լինին, որոնք այդ թշնամու-
թեան չար սերմը ցանել են ձեր սրտե,
զուք և ձեզ մոլորեցրել: Ես երրորդ՝ փո-
խանակ չարամիտների ծուռ բացատրու-
թիւններին հաւատալու, վեր առէք
Մեղուի 33 համարը, ականջներիդ բուր-
թը հանեցէք և լաւ մտաղրութեամբ
կարդացէք, այն ժամանակ կը համոզ-
ուիք, որ իմ թշնամիները ձեզ խաթել
են, Ղալաչի Մարգարը ամենևին ծաղր
չի արել պատկերներին, ընչպէս երևում
է, նա բոլորովին սուրբ հոգով է գրել:
— Ահա նորա գրածը պատկերի վերաբե-
րութեամբ. «Ընդհակառակն սուրբ հրաշ-
քին, ան գիրս գրած օրը եօթը վիրաց
պատկերը տարան դեղանը պատելու օ-
րը անձրև գայ»:

Եթէ մտաւոր կոյրերը, ապուշները,
չարամիտները, դղմագլուխները չեն հա-
կանում այս պարզ տողերի միտքը, թող
հասկացողները, բարեսիրտները վկայեն
թէ կայ յիշեալ տողերի մէջ ծաղրելու
կամ երդիծութեան նշան: Եթէ կայ, վը-
նաս չունի, թող լինձ Ղալաչի Մարգարի
տեղը դնեն, կոր կոր անեն, իրանց
ուղածի պէս պատժեն, իսկ եթէ չը կայ,
չեն ամաչում այն խարդախ, անզգամ
պարոնները, որ անամօթաբար յիշեալ
սուրբ տողերը հակառակ մտքերով են
բացատրում և անմեղներին դայթակղեց-
նում: Չեն ամաչում այն պարոնները,
որ այդպիսի կեղտոտ միջոցներով են ու-
զում ուրիշի պատուին դիպչել:

Վերջապէս, դուք ծուռ բացատրողներ,
անմեղներին դրդռողներ և դուք խար-
դախներ, ինչ որ անելու էք, արէք, ես
պատրաստ եմ: Միայն մի բարի խոր-
հուրդ կտամ ձեզ, եթէ չատ բարկանաք,
մինչև 100 համարեցէք. կամ թէ չէ, 10ը
չափեցէք, մէկ կարեցէք որ չը սխալուիք,
հա՛ էլ ուրիշ ոչինչ, որ ունի ականջս լը-
սելոյ, լսելոյ:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Գ. Ս. ՕՏԵԱՆ ԷՖԷՆԴԻ.

—

Օտեան Էֆենդին ազնիւ հօր և պատ-
ուական ընտանեաց զաւակ է, դեռ ես
երիտասարդ: Նա իւր որդեսէր և հաս-
կացող հօր ջնորհիւ ստացել է լաւ ըն-
տանեկան կրթութիւն հմուտ վարժա-
պետների միջնորդութեամբ: Նա իւր
հանճարով առաջ գնաց տէրութեան ծա-
ռայութեան մէջ և հասաւ Պալայի բար-
ձըր աստիճանին և այսօր էլ նախարա-
րի խորհրդական է: Ազգային նշանաւոր
անձանց չարքումն տեղ ունենալու ար-
ժանաւորութիւն ունի, որովհետև մի քա-
նի տարի ազգային երեսփոխանական
ժողովի առենապետութիւն արած է ա-
մենայն խոհեմութեամբ և տոկունու-
թեամբ այն ժամանակ, երբ դեռ ես մեր
ազգային երեսփոխաններն բնաւ վար-
ժած չէին ոչ առենական կարգերի և ոչ
էլ սահմանադրական որոշմանց համար:
Օտեան Էֆենդին Բ. Դրան այն հաւա-
տարիմ և ուղղախոհ Հայ պաշտօնեա-
ներիցն է, որոնք աչխատում են Հայ
ազգի չահերը կապել Օսմանեան պետու-
թեան չահերի հետ: Երանի թէ Օսմա-
նեան տէրութեան ղեկավար պաշտօնա-
կալք հասկանային այս գաղափարի ուղ-
ղութիւնը, որ վերևում է թէ Օսմա-
նեան պետութեան և թէ Տաճկահայոց
համար: Նա նեղքին փրկարար բարենո-
րոգմանց հաւակրողներից է եղած և
հակառակ կենդրոնականութեան, որ
խաղտողն է Օսմանեան տէրութեան:
Սոյն գաղափարի տէր էին և Օսմանեան
պետութեան երկու երևելի քաղաքագէտ-
ներն՝ Ֆուատ և Ալի փաշաները: Օտեան
էֆենդին իւր դիրքով, ուղղութեամբ և
հանճարով չատ կարևոր անձն է Տաճ-
կահայերի գործի համար: Թէև մանաւոր
տեղեկութիւնք կ. Պոլսից հաղորդումն-
որ իբրև նա հրաժարվում է Ազգային ե,
բնաւորհանական ժողովի առենապետու-
թիւնից, միայն նորա սէրն առ ազգը
յոյս է տալիս, որ այդ լուրն անստոյգ
լինի և Օտեան Էֆենդին ամեն արգելք-
ների յաղթելով կաչխատի անձնազոհու-
թեամբ յօգուտ իւր ազգի, իբրև առե-
նապետ: Ցուսանք:

—

Անցեալ մարտի 9-ին մեծ. պ. կարա-
պետ աղա Մուրթաֆեանցի միջնորդու-
թեամբ խմբագրութիւնս ուղարկեց կ.
Պոլիս Արարատեան և Դպրոցասիրաց Ա.
րևելեան ընկերութեանց 905 ռուբլի —
775 Դպրոցասիրաց և 130 Արարատեան
ընկերութեանց. մինչև այդ ժամանակ
յօգուտ Արարատեան ընկերութեան խըմ-
բագրութեանս հասած դումարները յանձ-
նուած են եղել Աշակի խմբագրութեան:
Շնորհակալութիւն մեծ. կարապետ Աղա
Մուրթաֆեանցին, որ վերոյիչեալ գումա-
րը տեղ հասցնելու համար բնաւ ծախք
չէր առել:

—

Մարտի 10-ից մինչև մայիսի վերջը,
ինչպէս յիշած է Մեղուի համարներում,
խմբագրութիւնս մտել է յօգուտ Արա-
րատեան, Դպրոցասիրաց Արևելեան և
Կիլիկեան ընկերութեանց 1,406 ռուբլի,
որանցից 293 առանձնապէս Արարա-
տեանի համար, 186 Կիլիկեանի և 162
Դպրոցասիրաց-Արևելեանի համար. իսկ
մնացած 765 ռուբլի նուիրած է երեք-
ընկերութեանց անունով և իւրաքանչիւ-
րին կը հասնի 255 ռուբլի: Այսպէս Ա-
րարատեան ընկերութեան վերոյիչեալ
1406 ռ. գումարից կը հասնի 548 ռբ.
Դպրոցասիրաց Արևելեան ընկերութեան
411 ռուբլի և Կիլիկեանին 441 ռբ.
— գումարն է 1406 ռ.:

Այս գումարը խմբագրութիւնս նոյնպէս
մեծ. պ. կարապետ Աղայ Մուրթաֆեան-
ցի միջնորդութեամբ կուղարկի յունիսի
սկզբին կ. Պոլիս ըստ պատկանելոյն:

Խմբագրութիւնս ստացաւ մեծ. պարոն Բ. Նաւասարդեանցից երեսից յօգուտ Արարատեան ընկերութեան 18 ռուբլի։ Ահա նուիրատու անձանց անունները

Մկրտիչ Անանեանց 1 ռ. Միքայէլ Ե. սայեանց 1 ռ. Նիկողայոս Տէր Մովսէսեանց 1 ռ. Աշչակ Սարգսեանց 1 ռբ. Ցարութիւն Նալբանդեանց երեսցի 1 ռ. Թովմաս Եսայեանց 1 ռ. Ստեփաննոս Աւագեանց 1 ռ. Գէորգ Սողոմոնեանց 1 ռ. Գէորգ Անտոնեանց 1 ռ. Ղամբէոս Գրիգորեանց 1 ռ. Գրիգոր Սառաջեանց 1 ռ. Գէորգ Սայիբեանց 1 ռբ. Ցարութիւն Նալբանդեանց վաղարշապատցի 1 ռ. №1 ռ. №11 1 ռ. կարապետ Ջալալեանց 3 ռ.։

—

Խմբագրութիւնս ստացաւ մեծ. պարոն Մարտիրոս Հախնազարեանցից ստացած յօգուտ Արարատեան—Դպրոցասիրաց ընկերութեան 61 ռուբլի։

Ահա նուիրատու անձանց անունները.

Աղէքսանդր Տէր Մկնտչեանց 15 ռբ. Սարգիս Մակարեանց 2 ռ. Աղէքսանդր Եսայեանց 1 ռ. Սարգիս Թումանեանց 1 ռ. Ասլան Նալբանդեանց 1 ռ. Բարսեղ Գրիգորեանց 1 ռ. Ջաքար Գրիգորեանց գրավաճառ 5 ռ. կարապետ Տէր Մկրտչեանց 50 կոպ. Վասիլ Վարդանեանց 5 ռ. Նիկոլա Մկրտչ Մուրատեանց 2 ռ. Սենեքերիմ Ղազարեանց 1 ռ. 50 կ. Օրիորդ Դէնօվաֆէ Խոջամիրեանց 2 ռ. Ա. Մ. Վ. Ագուլեցի 1 ռ. Համազասպ Սաֆրազեանց 1 ռ. Ա. Աբիեանց 2 ռ. Բաղդասար Եղիազարեանց 5 ռ. Սահակ քահանայ Խախանեանց 2 ռուբլի 50 կ. Յակոբ Ա...եանց 50 կոպ. Գրիգոր Ներսիսեանց 1 ռ. Ս. Պ. 2 ռբ. Ա. Բ. Շուխեանց 1 ռ. Ստեփան Բէլեանց 1 ռ. Ակնբսանդր Գողազեանց 1 ռ. կարապետ Ղարիբեանց 1 ռ. Մարտիրոս Հախնազարեանց 5 ռ.։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ։

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ
„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ ԼՐԱԳՐԻՆ
Բաժանորդ գրուել ցանկացողները թող բարեհաճին դառնալու առ պ. Պարոյր Կ. Պօլսում Ղալաթիա, մաքսատան դիմացը Կէօչէ Օղլու խանը թիւ 12 — 13։

PRIME A NOS LECTRICES
POUR DOUZE FRANCS AU LIEU DE QUINZE
ON RECOIT PENDANT UN AN LA MODE FRANCAISE

Ce journal, paraissant tout les Samedis, est le plus intéressant, le mieux sfait et la plus complet de tous les journaux de modes.

C'et le seul qui donne des Patrons découpés de grandeur uaturelle.

DÉTACHER CE DULLETIN et l'adresser, avec un mandat-poste de 12 francs, à M. ORSONI, Administrateur de la Mode Française, 37, rue de Liile, á Paris.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Հասուցանում է հասարակաց գիտութեան, որ նորա ատենում 6-ին յունիսի ներկայ ամի նշանակած է ձգողախոսութիւն 5 տարի ժամանակով կապալաւ տալու համար քաղաքապատկան գետին 656 քառակուսի սաժէն տարածութեամբ, որ գտանվում է 10երորդ մասում 2-րորդ բաժնում Թիֆլիզի, Կուր գետի առաջին զառիվայրի վերայ, Իրիստովի տան հանդէպը։ Այս գետնի սահմաններն են հիւսիսից Վորոնցովի եզրուղին, արևելքից Կուր գետը և արևմուտքից Խարլոմների կալուածքները։

ՆԵՐՔԻՍԵԱՆ

Հայոց Ազգային—Հոգևոր Դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ.

Ամիս և ամսաթիւ	Դասատուններ	Առարկաներ
Մայիսի 23	Է	Մանկավարժութիւն,
25	Ե	Ռուսաց Պատմութիւն,
26	Է	Կրօն և Աստուածաբանութիւն,
28	Ե	Ֆիզիքա և Բնագիտութիւն,
30	Է	Հայոց Մատենագրութիւն,
31	Ե	Հայոց Պատմութիւն,
Յունիսի 4	Ե	Աշխարհագրութիւն,
5	Է	Ընդհանուր Մատենագրութիւն:

I, II, III, և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մաթեմատիքայից լինելու են. I և II դասատանց մէջ Մայիսի 22-ին և 23-ին, իսկ III և IV դասատանց մէջ՝—Մայիսի 24-ին, 25-ին և 27-ին։

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26ը լինելու է զկնի ճաշու 5½ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից, իսկ պարապատական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտներըս։

Ներկայ 1879 թուի յուլիս սկզբից, տէրութեան Թղլտուութեամբ Թըֆլիզի մէջ հրատարակվելու է ռուս «Кавказъ» լրագրի չափով, քաղաքա—գրականական շաբաթաթերթ «Աշխատանք» ռուս և հայ լեզուներով հետևեալ պրօգրամով։

1) Դատաստանական ժամանակագրութիւն.

2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն. թէ անտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից։

3) Գրականութիւն. դիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ՝ լինեն նորանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ։ Քննադատութիւն ռուս, հայ և օտարազգիների գրականութիւնների։

4) Քաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ։

5) Մանր լուրեր։

6) Մանաւոր յայտարարութիւններ։

«Աշխատանք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը Թիֆլիզում առանց տուն հասնելու 5 ռ. Տուն հասցնելով 5 ռ. 50 կ.

Ռուսիայ զանազան քաղաքներ ղրկելով 6 ռուբլ

Փոստային դաշնակցութեամբ ղրկելով արտասահման 7 ռուբլ։

Մուտքագրութիւնն ընդունվում է Թիֆլիս կենտրոնական գրավաճառանոցում։

«Աշխատանքի» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս ցալը ուղարկել ուղղակի «Աշխատանք» լրագրի խմբագրին այս հասցէով. Григорію Тер-Меликсетову, редактору газеты «Трудъ», въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галустова водъ № 110.

Նիւթեր և անձնակ յօդուածներ «Աշխատանքի» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով։

Խմբագիր—հրատարակող Գրիգոր Տէր—Մկրտչեանց։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

բալաճառ Ջաք. Գրիգորեանցը ստանալով «Թորոս Լևոնի» հեղինակ—մեծապ. պ. Ծ ե ր ե ն ց է ց տպագրելու իրաւունքը նորա նոր աշխատութիւնը, որոյ վերնագիրն է «Երկունք 9-դ պարուս» և որոյ նիւթը վեր է առած Հայոց պատմական կեանքից ինները րդ դարի,—յանձնեց տպարանին և շուտով լոյս կը տեսնի։

Գրքի արժանաւորութեան մասին խօսելն այժմ աւելորդ եմ համարում. ով որ ծանօթ է պ. Ծերենցի գրուածների հետ, նա կը հասկանայ թէ ի՞նչ հոգով և ի՞նչ տեսակ գրուածք է։ Գինը լինելու է 1 (մի) ռուբլի, թէ Տփխիսում և թէ օտարաքաղաքացւոց համար։

50 հատառնողի համար հարիւրին 20% զիջումն կը լինի։

Գրավճ. Ջ. Գրիգորեանց։

ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ.

Ամարային արձակուրդների ժամանակ պարապել ցանկացողներուն ընդունում են և պարապտում են թէ որ և է դպրոց մտնելու և թէ վերաքննութեան համար։

Պարապմունքը կ՚սկսուի յունիսի 11-ին և կ՚վերջանայ օգոստոսի 20 ին։

Պարապել ցանկացողները կարող են դիմել «Տարրական դպրոց» վ. Էրիանովսկի փողոցը պ. Իշխան Ամատունու տանը № 11

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ „ՓՈՐՁ“ ԱՄՍԱԳՐԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ (ՄՂՁԻՆ) ՀԱՏՈՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ I. Հայի խնդիր ազգային վիպասանութիւն Պերճ Պռօսանցի. 2. Հայատակութեան և խղճի ազատութեան գաղափարը նախնի Հայոց մէջ, Կ. Կոստանեանցի։ 3. Օտար լեզուների դասատուութեան եղանակները։ 4. Գարիբալդի, գործ Ժօրժ Սանի։ 5. Գարուն Հայաստանի, բանաստեղծութիւն Գ. Բարխուդարեանցի։ 6. Սանդհպիտրիները, ըստ յոյն Զարլս Դիքէնսի 7. Ակնբսանդրօպոլից դէպի Կարին, ճանապարհորդութիւն Քաջբերունու. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 8. Հասունեան և Հակահասունեան խնդիր, Ծերենց։ ՑԱՒԵԼՈՒԱԾ 9. Յայտարարութիւն, Ամբրոսիոս վ. Ռուբինեանի։

Մուտքագրուել կարելի է Տփխիսում «Փորձի» խմբագրատունը և կենտրոնական գրավաճառանոցում։ Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ ասցէով։ — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ»

Խմբագիր—հրատարակիչ
Աբգար Ծովհաննիսեան։

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Վերնագրով պատկերազարդ հանդիսի ներկայ 1879 ամի տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդագրաց։ Մեղուի ընթերցողք կարող են ծանօթանալ այդ հանդիսի արտաքին ձևի և բովանդակութեան հետ ընդամին բաժանուած յայտարարութենէն։ Գինն առաքմամբ է 1 ռ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 30-го МАЯ 1879 г. — Типографія Амб. Энфіаджянцъ и К-о — Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց։